ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N1652 - Ա **26 մարտի 2009թ.**

ԵՍԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 144 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱՅԱՆԵ ԱՐՇԱՎԻՐԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ, ԱՇՈՏ ՍՈՒՐԵՆԻ ՄԻՐԶՈՅԱՆԻ, ՍԵԴԱ ԹՈՐԳՈՄԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ, ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ, ՍԵՐԺԻԿ ԱՆԱՆԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ, ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ, ՎԱՉԱԳԱՆ ԳԵՎՈՐԳԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, ՔՐԻՍՏԻՆԵ ՍՏԵՓԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Գայանե Արշավիրի Կարապետյանի (ծնված 11.07.1964թ.), Աշոտ Սուրենի Միրզոյանի (ծնված 29.01.1958թ.), Սեդա Թորգոմի Հովհաննիսյանի (ծնված 16.10.1931թ.), Սամվել Անանիկի Կարապետյանի (ծնված 08.08.1951թ.), Սերժիկ Անանիկի Կարապետյանի (ծնված 01.09.1956թ.), Սարգիս Ստեփանի Կարապետյանի (ծնված 10.04.1975թ.), Վաչագան Գևորգի Գրիգորյանի (ծնված 02.07.1946թ.), Քրիստինե Ստեփանի Կարապետյանի (ծնված 17.04.1978թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Եսայան փողոցի հ.144 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 247.29քմ, որից 186.64քմ մակերեսով հողամասը Գայանե Արշավիրի Կարապետյանին, Աշոտ Սուրենի Միրզոյանին, Սեդա Թորգոմի Հովհաննիսյանին, Սամվել Անանիկի Կարապետյանին, Սերժիկ Անանիկի Կարապետյանին, Սարգիս Ստեփանի Կարապետյանին, Վաչագան Գևորգի Գրիգորյանին, Քրիստինե Ստեփանի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող հողամաս է (վկայական տրված 07.02.1997թ. հ.449): Օրինական հողամասին կից օգտագործվող 60.65քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1972 թվականը, 30.04.2005թ. Վաչագան Գրիգորյանի, Սարգիս Կարապետյանի, Սերժիկ Կարապետյանի, Սամվել Կարապետյանի, Սեդա Հովհաննիսյանի կողմից տրված գրավոր համաձայնությունը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման 08.02.2008թ., Երևանի քաղաքապետարանի «Հողի և ունեցվածքի գործառնություններ» ՊՓԲԸ-ի 10.01.2009թ. հ.20/2-Ե-395 գրությունները, Երևանի քաղաքապետարանի «Քաղաքաշինություն» ՊՓԲԸ-ի 19.12.2008թ. հ.20-Ել-2304 եզրակացությունը, համաձայն որի Եսայան փողոցի հ.144 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով «Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական

գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Եսայան փողոցի հ.144 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Գայանե Արշավիրի Կարապետյանի, Աշոտ Սուրենի Միրզոյանի, Սեդա Թորգոմի Հովհաննիսյանի, Սամվել Անանիկի Կարապետյանի, Սերժիկ Անանիկի Կարապետյանի, Սարգիս Ստեփանի Կարապետյանի, Վաչագան Գևորգի Գրիգորյանի, Քրիստինե Ստեփանի Կարապետյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 186.64քմ մակերեսով հողամասին կից 60.65քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 60.65քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Նոյեմբերյան փողոցի հ.144 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Եսայան փողոցի հ.144 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Էրեբունի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Գայանե Արշավիրի Կարապետյանի, Աշոտ Սուրենի Միրզոյանի, Սեդա Թորգոմի Հովհաննիսյանի, Սամվել Անանիկի Կարապետյանի, Սերժիկ Անանիկի Կարապետյանի, Սարգիս Ստեփանի Կարապետյանի, Վաչագան Գևորգի Գրիգորյանի, Քրիստինե Ստեփանի Կարապետյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Շենգավիթ թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ